ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 528-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Անդրանիկ Ազատի Մագարյանը *(հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Երևանյան փողոց, 90 փուն հասցեում, ՀԾՀ 2811680063)*՝ հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի մարտի 28-ին թիվ 1029 զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ Անդրանիկ Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի գծով պատավորությունը 28.03.2023 թվականի դրությամբ ընդհանուր կազմում է ***1.822.597 (մեկ միլիոն ութ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր իններորդ) Հայաստանի Հանրապետության դրամ,*** որից *699.754 (վեց հարյուր իններորդինը հազար յոթ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամը*՝ որպես 99QQ019 հաշվառման համարանիշի, MERCEDES-BENZ S500 4MATIC մակնիշի, WDD2211861A111954 նույնականացման համարի փոխադրամիջոցի գծով հաշվարկված հարկային պարտավորության գումար (216.000 (երկու հարյուր տասնվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես 2023 թվականի դրությամբ հաշվարկված հարկային պարտավորության գումար, *432.000 (չորս հարյուր երեսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամը*՝ որպես մինչև 2023 թվականը չվճարված ապառք, իսկ 51.754 (հիսունմեկ հազար յոթ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ) և *568.879 (հինգ հարյուր վաթսունութ հազար ութ հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամը*՝ որպես նույնանուն գույքի՝ 2019-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (432.000 (չորս հարյուր երեսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես ապառք, իսկ 136.879 (մեկ հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ), *243.456 (երկու հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր հիսունվեց)* Հայաստանի Հանրապետության *դրամը*՝ որպես 66MM061 հաշվառման համարանիշի, MERCEDES-BENZ S 320 մակնիշի, WDB1400321A061807 նույնականացման համարի փոխադրամիջոցի գծով հարկային պարտավորության գումար (75.150 (յոթնասունհինգ հազար մեկ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես 2023

թվականի դրությամբ հաշվարկված հարկային պարտավորության գումար, 150.300 (մեկ հարյուր հիսուն հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես մինչև 2023 թվականը չվճարված ապառք, իսկ 18.006 (տասնութ հազար վեց) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ) և *310.508 (երեք հարյուր տասը հազար հինգ հարյուր ութ)* Հայաստանի Հանրապետության *դրամը*՝ որպես 66MM061 մակնիշի, MERCEDES-BENZ S320 մակնիշի փոխադրամիջոցի՝ 2017-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (227.113 (երկու հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես ապառք, իսկ 83.395 (ութսուներեք հազար երեք հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ):

2023 թվականի մարտի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի սեպտեմբերի 1-ին իրականացվել է վարչական վարույթի լսումների փուլը, որին մասնակցելու նպատակով Անդրանիկ Մարգարյանին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 31.07.2023 թվականի թիվ 2369 և 31.08.2023 թվականի թիվ 2700 ծանուցումներն ուղարկվել են փոստով, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարություն հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով, սակայն Անդրանիկ Մարգարյանը չի ներկայացել լսումներին, ուստի վարչական վարույթի լսումներն իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 50-րդ, 51-րդ և 53-րդ գլուխների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի սեպտեմբերի 1-ի արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Քաղաքացի Անդրանիկ Ազատի Մարգարյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի գանձել ընդհանուր ***1.822.597 (մեկ միլիոն ութ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ,*** որից *699.754 (վեց հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամը*՝ որպես 99QQ019 հաշվառման համարանիշի, MERCEDES-BENZ S500 4MATIC մակնիշի, WDD2211861A111954 նույնականացման համարի փոխադրամիջոցի գծով հաշվարկված հարկային պարտավորության գումար (216.000 (երկու հարյուր տասնվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես 2023 թվականի դրությամբ հաշվարկված հարկային պարտավորության գումար, 432.000 (չորս հարյուր երեսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես մինչև 2023 թվականը չվճարված ապառք, իսկ 51.754 (հիսունմեկ հազար յոթ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ) և *568.879 (հինգ հարյուր վաթսունութ հազար ութ հարյուր յոթանասունինը)* Հայաստանի Հանրապետության *դրամը*՝ որպես նույնանուն գույքի՝ 2019-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (432.000 (չորս հարյուր երեսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես ապառք, իսկ 136.879 (մեկ հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ), *243.456 (երկու հարյուր*

քառասուներեք հազար չորս հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության *դրամը*՝ որպես 66MM061 հաշվառման համարանիշի, MERCEDES-BENZ S 320 մակնիշի, WDB1400321A061807 նույնականացման համարի փոխադրամիջոցի գծով հարկային պարտավորության գումար (75.150 (յոթնասունհինգ հազար մեկ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես 2023թվականի դրությամբ հաշվարկված հարկային պարտավորության գումար, 150.300 (մեկ հարյուր հիսուն հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես մինչև 2023 թվականը չվճարված ապառք, իսկ 18.006 (տասնութ հազար վեց) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ) և *310.508 (երեք հարյուր տասը հազար հինգ հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամը*՝ որպես 66MM061 մակնիշի, MERCEDES-BENZ S320 մակնիշի փոխադրամիջոցի՝ 2017-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (227.113 (երկու հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես ապառք, իսկ 83.395 (ութսուներեք հազար երեք հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ) (վճարման հաշվեհամար՝ 900325191022):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 4
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 529-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

«Ավտոճանապարհային մեքենաներ» փակ բաժնետիրական ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն Զորիկ Գափոյանի *(հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Նորակերտ բնակավայր, Նորակերտի խճուղի 10, ՀՎՀՀ՝ 04700747)*՝ հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող PS14587BAF, PS9581563D, PS91FEB52C, PSES1AEFB6, PSFA8566A7, PSD3687C7A, PS7D44BF5F ծածկագրերով փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունները մինչև 2023 թվականի համար 12.01.2023 թվականի դրությամբ հաշվարկված ընդհանուր կազմում են ***360.798 (երեք հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ,*** որից 336.625 (երեք հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես մինչև 2023 թվականը հաշվարկված ապառք, 24.173 (քսանչորս հազար մեկ հարյուր յոթանասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի սեպտեմբերի 1-ին իրականացվել է վարչական վարույթի լսումների փուլը, որին մասնակցելու նպատակով «Ավտոճանապարհային մեքենաներ» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Զորիկ Գափոյանին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 01.08.2023 թվականի թիվ 2378 և 31.08.2023 թվականի թիվ 2698 ծանուցումներն ուղարկվել են փոստով, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարություն հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով,

սակայն Զորիկ Գափոյանը չի ներկայացել լսումներին, ուստի վարչական վարույթի լսումներն իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 50-րդ, 51-րդ և 53-րդ գլուխների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի սեպտեմբերի 1-ի արձանագրությունը՝ որոշում եմ.

1. «Ավտոճանապարհային մեքենաներ» փակ բաժնետիրական ընկերությունից ընդհանուր գանձել ***360.798 (երեք հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ որպես՝*** «Ավտոճանապարհային մեքենաներ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող PS14587BAF, PS9581563D, PS91FEB52C, PSES1AEFB6, PSFA8566A7, PSD3687C7A, PS7D44BF5F ծածկագրերով փոխադրամիջոցների գույքահարկի գծով պարտավորության գումար, որից 336.625 (երեք հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես մինչև 2023 թվականը հաշվարկված ապառք, իսկ 24.173 (քսանչորս հազար մեկ հարյուր յոթանասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ (վճարման հաշվեհամար՝ 900325006659):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 4
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 530-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 22-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022QHXQ8Q), շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը, տրված 2023 թվականի օգոստոսի 4-ին «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, շինությունը կատարած անձ Արտաշես Արմանի Միկիչյանի 2023 թվականի օգոստոսի 11-ի N 3321 դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող 109.0 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 78,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 45,8 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 6,9 քառակուսի մետր մակերեսով աստիճանը և 2,3 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել

Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղու 2-րդ փողոց 8/1 ավտոտնակ (ծածկագիր 04065UCA4HVK):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Արտաշես Արմանի Միկիչյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունները, Արտաշես Արմանի Միկիչյանին ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երևանյան խճուղի 2-րդ փողոց 8/1 հասցեում գտնվող 0,0109 հա մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 109.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր ավտոտնակի, ավտոտնակին կից բաց պատշգամբի, աստիճանի և պարսպի համար՝ 1969 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 263 452,20 (երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր հիսուներկու դրամ քսան լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6.Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 4441,8 դրամ, որը 109.0 քառակուսի մետրի համար կկազմի 484 156,20 (չորս հարյուր ութսունչորս հազար մեկ հարյուր հիսունվեց դրամ քսան լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 04

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 531-Ա

ՓԻՐՈՒԶ ՍԱՐԻԲԵԿԻ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հուլիսի 21-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 31-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023YENXU6), հողամասի սեփականատեր Փիրուզ Սարիբեկի Հովհաննեսյանի լիազորված անձ Ջերմիկ Նարիբեկի Թովմասյանի 2023 թվականի օգոստոսի 2-ի N 3138 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղի 8-րդ փողոցի 13 հասցեում գտնվող Փիրուզ Սարիբեկի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0020-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 287,98 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 11,50 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 18,68 քառակուսի մետր արտաքին մակերեսով լողավազանը և 17,82 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԳԵՈԼԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1422 դրամ, 1 քառակուսի մետր օժանդակ շինության, լողավազանի և պարսպի համար կազմում է 859,2 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 450 749,16 (չորս հարյուր հիսուն հազար յոթ հարյուր քառասունինը դրամ տասնվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Այգեկ բնակավայրի 900325155175 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 05

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 532-Ա

ԱՇԽԵՆ ՄԻԱՍՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հուլիսի 28-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 21-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023BKGXFZ), հողամասի սեփականատեր Աշխեն Միասնիկի Հովհաննիսյանի լիազորված անձ Հովսեփ Գագիկի Հովհաննիսյանի 2023 թվականի հուլիսի 27-ի N 3015 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի 1-ին փողոցի թիվ 26 հասցեում գտնվող 04-065-0056-0022 կադաստրային ծածկագրով Աշխեն Միասնիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 71,22 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 20,41 քառակուսի մետր մակերեսով ծածկը և 9,31 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՆԱՐԵԿ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՄԱՐԼԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և ծածկի համար կազմում է 1969 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար

կազմում է 1181,4 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 191 418,3 (մեկ հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր տասնութ դրամ երեսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մերձավան գյուղի 900325175157 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 05
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 533-Ա

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի 1855-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Բարեկամության փողոցի 1-ին բազմաբնակարան շենքի բնակիչների դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Բարեկամության փողոցի 1-ին բազմաբնակարան շենքի զբաղեցրած 1162.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառական նշանակությամբ հողամասը փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.1162 հեկտար մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, հանել համայնքային սեփականության հողերի հաշվեկշռից և ներառել քաղաքացիների սեփականության հողերի հաշվեկշռում:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 534-Ա

ԱՐԹՈՒՐ ՀԱՅԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐԱԾ ԲԱՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ ինքնակամ բացվածքը որևէ բացասական կերպով չի ազդում շենքի կրողունակության և սեյսմակայունության վրա, պիտանի է բնականոն շահագործման և վտանգ չի սպառնում մարդկանց կյանքին ու առողջությանը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և սեփականատեր Արթուր Հայկի Հովհաննիսյանի 2023 թվականի հունիսի 2-ի N 1966 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղում գտնվող Արթուր Հայկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Բարեկամության փողոցի 2-րդ շենքի N 1 բնակարանի մեկ ինքնակամ բացված պատուհանը և մեկ ինքնակամ բացված դուռը, համաձայն «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ բացվածքի համար՝ 426,6 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 853,20 (ութ հարյուր հիսուներեք դրամ քսան լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Բնակարանի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1) 0.00493 հեկտար մակերեսով բնակարանին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Բաղրամյան, Բարեկամության փողոց 2-րդ շենք, 1 բնակարան (ծածկագիր 04030QCF6VMW):

4. Բնակարանի կողմ 2-ին (Առանձնացվող հատված 2) 0.01391 հեկտար մակերեսով բնակարանին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ

Փարաքար համայնք, գյուղ Բաղրամյան, Բարեկամության փողոց, 2-րդ շենք, 1/6 բնակարան (ծածկագիր 04030DYXMZMN):

5. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 05

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 535-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 2-ի 14-Ն որոշման 4-րդ կետը և հունիսի 27-ի 53-Ա որոշման 4-րդ կետը. Որոշում եմ.

1. Բաժին 09 Խումբ 1 Դաս 1 «Նախադպրոցական կրթություն» Այգեկի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվի «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» 4511 հոդվածի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով տարեկան նախատեսված 32000,0 հազ.դրամ գումարը տեղափոխել սեպտեմբեր ամիս:

2. Բաժին 01 Խումբ 1 Դաս 1 «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» ծախսերի նախահաշվի 5122 «Վարչական սարքավորումներ» հոդվածով նախատեսված 8000,0 հազ.դրամ գումարից 4000,0 հազ. դրամը տեղափոխել Բաժին 01 Խումբ 6 Դաս 1 «Ընդհանուր հանրային բնույթի ծառայություններ» ծախսերի նախահաշվի 5122 «Վարչական սարքավորումներ» հոդվածին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի նախահաշիվներում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. սեպտեմբերի 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 536-Ա

ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի Արևաշատ գյուղի բնակիչ Շուշանիկ Ալիխանյանի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը. ***Որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած Արևաշատ գյուղի Անդրանիկի փողոց 27 տան բնակիչ Շուշանիկ Աշոտի Ալիխանյանին ցուցաբերել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ օգնություն:
2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 537-Ա

ԲԵԼԼԱ ԱՇՈՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 5-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 4-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023QAX5SZ), հողամասի սեփականատեր Բելլա Աշոտի Վարդանյանի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի N 3767 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Արևաշատ գյուղում գտնվող Բելլա Աշոտի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-026-0025-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 267,1 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան երկրորդ հարկը և 1,4 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան երկրորդ հարկի համար կազմում է 1209 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի

համար կազմում է 725,4 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 323 939,46 (երեք հարյուր քսաներեք հազար ինը հարյուր երեսունինը դրամ քառասունվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասին և շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Արևաշատ, Հ. Շիրազի փողոց, 29 բնակելի տուն (ծածկագիր 04026JWGETTM):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Արևաշատ գյուղի 900325156157 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 06
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 538-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 334-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 4-ի թիվ Կ-04072023-04-0010 գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, հողամասի համասեփականատեր Ռոբերտ Ալբերտի Մելիքյանի 2023 թվականի օգոստոսի 1-ի թիվ 3100 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 2-ի «Աննա Արշավիրի Մելիքյանի, Ռուզաննա Ալբերտի Մելիքյանի, Ռոբերտ Ալբերտի Մելիքյանի և Սամվել Ալբերտի Մելիքյանի կողմից կատարած ինքնակամ շինությունների օրինականացման և նոր հասցե տրամադրելու մասին» N 334-Ա որոշման՝

1) 1-ին կետում՝ «նկուղը» բառը փոխարինել «կիսանկուղը» բառով,

2) 2-րդ կետում՝ «նկուղի» բառը փոխարինել «կիսանկուղի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 06
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 539-Ա

ՄԱՐԻՆԵ ԱՇՈՏԻ ԿՈԾԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով, 13-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հուլիսի 31-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հունիսի 27-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023YGPYPJ), հողամասի սեփականատեր Մարինե Աշոտի Կոծինյանի 2023 թվականի օգոստոսի 9-ի N 3265 դիմումը. ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի 4-րդ փողոցի թիվ 40 հասցեում գտնվող 04-065-0017-0017 կադաստրային ծածկագրով Մարինե Աշոտի Կոծինյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 114.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի տունը և 114.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց բնակլեի տան կիսանկուղը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կիսակառույց բնակելի տան, բնակելի տան կիսանկուղի համար կազմում է 1969 դրամ,

վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 452 082.4 (չորս հարյուր հիսուներկու հազար ութանասուներկու դրամ քառասուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մերձավան գյուղի 900325175157 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 06

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 540-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0151-0020-ից կադաստրային ծածկագրով 0.0003 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 172/1 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 07
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 541-Ա

«ԳԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի, 275-283-րդ, 219.1-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով 2023 թվականի օգոստոսի 9-ին առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմված արձանագրությունը /մտից՝2023թվականի օգոստոսի 14-ի թիվ 3339/ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի արձանագրությունը. Որոշում եմ՝

1. Առանց թույլտվության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Սուրբ Հարություն փողոց 5/1 հասցեում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով, «ԳԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով:
2. «ԳԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ» անհատ ձեռնարկատերը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Փարաքարի համայնքապետարանի 900325191030 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Փարաքար համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովին:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԳԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ» անհատ ձեռնարկատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 7
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 542-Ա

«ՖԱԿԵԼ ԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով «ՖԱԿԵԼ ԳԱԶ» ՍՊԸ տնօրեն Տիգրան Պետրոսյանի կողմից ներկայացված տեղական տուրքի վճարման 2023 թվականի օգոստոսի 11-ի թիվ 048572 վճարման անդորրագիրը. որոշում եմ՝

1. ՖԱԿԵԼ ԳԱԶ» ՍՊԸ-ի նկատմամբ 2023 թվականի օգոստոսի 9-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 7
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 543-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ-ի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» թիվ 46-Ն որոշման 6-րդ կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N695-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի 6.3.1 կետի. ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2023թ-ի սեպտեմբերի 22-ի Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Արմավիրի մարզի Փարաքար համայնքում իմ ղեկավարությամբ անցկացնել «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈՒ)

2. ՇՈՒ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) ՇՈՒ-ի ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ, համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ Գոռ Սարիբեկյանին.

2) ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանին:

3. ՇՈՒ-ին ընդգրկել՝

1) Փարաքար համայնքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին.

2) Փարաքար համայնքի տարահանման հանձնաշողովին.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

4) Փարաքար համայնքի ղեկավար կազմ, Պտղունք, Մուսալեռ, Մերձավան բնակավայրերի ղեկավարներին.

4. ՇՈՒ-ի ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Սարիբեկյանին՝ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման համար ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

5. ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետ, Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանին

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2023թվականի սեպտեմբերի 11-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև.

4) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2023 թվականի սեպտեմբերի 20-ին:

6. ՇՈՒ-ի մասնակիցներին՝

1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային տարահանման» պլաններով նախատեսված միջոցառումները.

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 7
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 544-Ա

ԽՈՐԵՆ ՍԵՐԺԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 8-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի օգոստոսի 8-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023G9ET2R), հողամասի սեփականատեր Խորեն Սերժիկի Գասպարյանի 2023 թվականի օգոստոսի 16-ի N 3406 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Արարատյան փողոցի թիվ 57 հասցեում գտնվող Խորեն Սերժիկի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0130-0044 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 187.93 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 2316 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է

435 245.88 (չորս հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր քառասունհինգ դրամ ութանասունութ լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 07
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 545-Ա

ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի Այգեկ բնակավայրի վարչական ղեկավարի զեկուցագիրը և Փարաքար համայնքի բնակիչ Հասմիկ Սարգսյանի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներին ցուցաբերել 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ.ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08
գ.Փարաքար

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Փարաքար համայնքի ղեկավարի

2023 թվականի սեպտեմբերի 8-ի

թիվ 545-Ա որոշման

Ցուցակ

Հարազատին կորցրած ընտանիքիների դրամական օգնություն ստացողների

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	հասցեն	Գումարը /ՀՀ դրամ/
1.	Սարգսյան Հասմիկ Մուրադի	Գ.Փարաքար	40 000
2.	Պետրոսյան Պայքար Նվերի	Գ.Այգեկ	40 000
	ընդամենը		80000

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 546-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հունիսի 26-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023JYJFFF), Ասյա Հրաչիկի Համբարձումյանի կողմից 2023 թվականի մայիսի 23-ին տրված լիազորագիրը (գրանցամատյան թիվ 2441), շինությունը կատարած անձ Ասյա Հրաչիկի Համբարձումյանի լիազորված անձ Արմեն Մյուդիկի Մոսոյանի 2023 թվականի հունիսի 14-ի N 2141 դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող 54,5 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 13.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ՍԵՎԱՆ ՄԱՆՎԵԼԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինության հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թահիրով, Մայրաքաղաքային փողոց 8/6 շինություն:

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Ասյա Հրաչիկի Համբարձումյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունը, Ասյա Հրաչիկի Համբարձումյանին ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի Թահիրով գյուղի Մայրաքաղաքային փողոցի թիվ 8/6 հասցեում գտնվող 0,00545 հեկտար մակերեսով հողամասը՝ առկա շինությունով:

4. 54,5 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր ծածկի համար՝ 24525 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 318 825 (երեք հարյուր տասնութ հազար ութ հարյուր քսանհինգ դրամ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6.Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 10513.8 դրամ, որը 54,5 քառակուսի մետրի համար կկազմի 573 002,1 (հինգ հարյուր յոթանասուներեք հազար երկու դրամ տասը լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 08
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 547-Ա
ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Երևանյան փողոցի 26 հասցեում, ուրիշի սեփականություն հանդիսացող հողամասում, Արմեն Հակոբյանի /անձնագիր՝ BA 1201317 տրված՝ ծնված՝ 12.05.1986թ. հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ վարչական շրջան, Պռոշյան 17 հասցեում/ կողմից առանց թույլտվության գոյություն ունեցող շինության մասամբ ապամոնտաժելու, վերակառուցելու և թաց պրոցեսներ իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ.

Արմեն Հակոբյանը, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, ուրիշի սեփականություն հանդիսացող հողամասում՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասերով սահմանված արարք կատարելու համար վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակել է իրականացրել ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 2023թվականի օգոստոսի 9-ի թիվ 3259 զեկուցագրի և կից նյութերի հիման վրա 2023 թվականի օգոստոսի 9-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, վարչական հանձնաժողովի նիստի օրվա, ժամի և վայրի մասին իրազեկող 2023 թվականի օգոստոսի 14-ի թիվ 2500 /հիմք՝ փոստային առաքանի LO110801088 AM, LO110720953 AM, LO110954925 AM/ և 2023 թվականի օգոստոսի 31-ի թիվ 2696 /հիմք՝ փոստային առաքանի LO111076167 AM/ ծանուցումներն ուղարկվել են փոստով և հրապարակվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների

պաշտոնական ինտերնետային azdarar.am կայքում: Արմեն Հակոբյանը լինելով պատշաճ ծանուցված չի ներկայացել նիստին:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 2023 թվականի օգոստոսի 9-ի թիվ 3259 զեկուցագիրը՝ կից նյութերով, այն մասին, որ Փարաքար համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Երևանյան փողոց 26 հասցեում ապօրինի շինարարություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հ. Միքաելյանի կողմից կազմվել է թիվ 13 արձանագրությունը, 2023թվականի օգոստոսի 9-ի թիվ 3259 զեկուցագրը և վարչական հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 25-ի և սեպտեմբերի 7-ի արձանագրությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արմեն Հակոբյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Երևանյան փողոցի 26 հասցեում՝ առանց համապատասխան շինարարական թույլտվության, ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքի համար վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելվել է ապօրինի շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ գոյություն ունեցող շինությունների մասամբ ապամոնտաժում, վարակառուցում, թաց պրոցեսների իրականացում, ուստի քննարկվող կառույցը հանդիսանում է ինքնակամ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի օգոստոսի 9-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի հիմքով, Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 սեպտեմբերի 7-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով Արմեն Հակոբյանը պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի

ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Արմեն Հակոբյանը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Երևանյան 26 հասցեում, առանց համապատասխան շինարարական թույլտվության, ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասերով սահմանված արարք կատարելու համար վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակել է իրականացրել ապօրինի շինարարական աշխատանքներ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՎԻՎ ՀՀ օրեսգրքի 154-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 7-ի արձանագրությունը, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և գյուղատնտեսության բաժնի պետի կողմից 2023թվականի օգոստոսի 9-ի թիվ 3259 զեկուցագիրը. որոշում եմ՝

1. Իրավախախտ Արմեն Հակոբյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտ գյուղի Երևանյան փողոցի 26 հասցեում ինքնակամ շինարարություն իրականացնելու համար տույժ նշանակելու օրվանից հետո ինքնակամ կառույց իրականացնելը շարունակելու համար, 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ իրավախախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325181270 հաշվեհամարին՝ ստացող Փարաքար համայնք:

2. Առաջարկել իրավախախտող Արմեն Հակոբյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից **15** օրյա ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները, ապամոնտաժել ինքնակամ կառույցը և տարածքը բերել նախկին տեսքի:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Իրավախախտ Արմեն Հակոբյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 8
գ.Փարաքար